



*Համարը N 486-Ս  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը Չի հրատարակվել  
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 08.05.2019*

*Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 02.05.2019  
Ստորագրման ամսաթիվը 07.05.2019  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը*

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2 մայիսի 2019 թվականի N 486-Ս

**ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմինն ամրացված տրանսպորտային միջոցները հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին՝ հետագայում օտարելու նպատակով՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանն ամրացված տրանսպորտային միջոցները հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմինն՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հետ համատեղ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման N 1 հավելվածում նշված ավտոմեքենաների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 1 հավելվածում նշված ավտոմեքենաների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ համատեղ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման N 2 հավելվածում նշված ավտոմեքենաների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 2 հավելվածում նշված ավտոմեքենաների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան

2019 թ. մայիսի 7  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
մայիսի 2-ի N 486-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

N/N ը/կ	Մակնիշը	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Նույնացման համարը	Սկզբնական արժեքը (ՀՀ դրամ)	Հաշվեկշռային արժեքը (վերազնա- հատված) (ՀՀ դրամ)
<b>Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմին</b>						
1.	Հունդայի Սոնատա 2.4 <sup>ուղ.</sup>	208LL60	2006	KMNET41C36A252031	9500000	0
2.	Վազ 21214	181LL60	2006	XTA21214061807142	3634000	0

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
մայիսի 2-ի N 486-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԶՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ  
ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

N/N ը/կ	Մակնիշը	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Նույնացման համարը	Սկզբնական արժեքը (ՀՀ դրամ)	Հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)
<b>Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</b>						
1.	TOYOTA CAMRY	201LL60	2010	JTHBE40K303203820	12000000	0
2.	TOYOTA COROLLA	206LL60	2014	NMTBB4JE70R050801	10000000	4536700
3.	TOYOTA COROLLA	190LL60	2015	NMTBBOJELOR109459	10000000	5983900

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ն. Փաշինյան**